# Ծանուցում

## Արմենտելը տեղեկացնում է

2006 թվականի փետրվարի 20-ից (մինչեւ մարտի 20-ը) միայն մուտքային զանգերի հնարավորությամբ միացվել են հիմնական (ֆիքսված) հեռախոսակապի բոլոր այն բաժանորդների հեռախոսագծերը, որոնք անջատվել են հեռախոսագծի (dial-up) օգտագործմամբ ինտերնետ հասանելիության ծառայությունից օգտվելու ընթացքում կատարված միջազգային զանգերի պարտքերի համար:

Այդպիսի պարտքեր ունեցող բոլոր բաժանորդները կարող են անձնագրով ներկայանալ Արմենտելի իրենց սպասարկող ստորաբաժանում եւ կնքել համաձայնագիր՝ նշված պարտքերը տարաժամկետ վճարումներով մարելու վերաբերյալ: Համաձայնագիր կնքած բաժանորդների հեռախոսակապը կվերամիացվի՝ առանց միջքաղաքային եւ միջազգային ելքային զանգերի հնարավորության:

*Արմենիա Տելեֆոն Կոմպանի*

## Քննարկվելու են սակագների վերանայման հայտեր

Մարտի 10-ին, ժամը 11-ին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում (Սարյան փ. 22) կայանալու է նիստ, որում քննարկվելու են «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ամսական մինչեւ 10,0 հազար նորմալ խորանարդ մետր սպառում ունեցող սպառողներին (բաժանորդներին) վաճառվող բնական գազի սակագնի ու ամսական 10,0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառում ունեցող սպառողներին (բաժանորդներին) վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագնի հաշվարկման բանաձեւի, ինչպես նաեւ Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ), Գազամատակարարման համակարգի բաշխման գործունեության («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ), Գազամատակարարման համակարգի փոխադրման գործունեության («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ, «Տրանսգազ» ՍՊԸ) սակագների վերանայման հայտերը:

*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մամուլի ծառայություն*

**ՀՀ Կենտրոնական բանկը 03.03.2006թ. ժ.9.00 ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Հաշվարկային փոխարժեք | Գնում | Վաճառք |
|---|---|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 450.65 | 446.10 | 455.20 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 537.22 | 534.00 | 540.40 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 16.08 | 15.10 | 17.00 |

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA LOG ON TO www.azg.am

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը ՔԶԲԿ-ԱԶԲ 06/03 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ ընկերության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով: Հրավերն ստանալու համար անհրաժեշտ է 850 ՀՀ դրամ փոխանցել «Հայէկոնոմբանկ», Արաբկիրի մասնաճյուղ, 163058110209 հաշվեհամարով եւ սույն հայտարարության հրապարակմանը հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝

Երեւան, Հ. Ներսիսյան-7, հեռ. 28-58-09

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ համապատասխան լիազորագրի հիման վրա:

Հայտերի բացման օրն է՝ 17.03.06 թ., ժամը 12:00:

## Դպրոցական պայուսակների գնում

Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամը (ՋՀՀ) իր բարեգործական ծրագրի շրջանակներում կգնի 7-17 տարեկան աղջիկների եւ տղաների համար նախատեսված տեղական արտադրության 500-600 հատ դպրոցական պայուսակ: Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամի գրասենյակ կարող են դիմել ՀՀ-ում գրանցված տեղական դպրոցական պայուսակներ արտադրող/վաճառող ձեռնարկությունները: Հետաքրքրված ձեռնարկությունները անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ստանալու համար կարող են դիմել 2006 թ-ի Մարտի 9-ից 30-ը, ժամը 10.00-17.00-ն հետեւյալ հասցեով՝ ք, Երեւան, Աբովյան 34, բն. 5. ***Հեռ: 54 44 17; 54 44 18.***

**«ՖԻՆՔԱ» ֆինանսական կազմակերպությունը հայտարարում է մրցույթ խմբային փոխառությունների բաժնի Փոխատվական մասնագետի թափուր աշխատատեղի համար**

*Պահանջներն են*

- բարձրագույն կրթություն (նախընտրելի է տնտեսագիտական)
- հաղորդակցման եւ շփման հմտություններ
- նվիրվածություն աշխատանքին
- ռուսերենի եւ անգլերենի իմացությունը նախընտրելի է

*Միկրոֆինանսական մասնագետի պարտականություններն են*

- Հաճախորդների ներգրավում կազմակերպություն
- փոխառուի բիզնեսի գնահատում
- փոխառության վերահսկում՝ մինչեւ մարման վերջնաժամկետը

Փաստաթղթերը ներկայացնել հետեւյալ հասցեով՝
Ագաթանգեղոսի 2 ա (կրկեսի հարեւանությամբ)
հեռ. 58-48-63, 54-55-31/ 32, 52-27-12
Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2006 թ. մարտի 17-ը

ԿԱՆԽԱՎՃԱՐԱՅԻՆՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՆՈՐ ՍԱԿԱԳՆԵՐ

ՄԱՐՏԻ 1-ից

6000 դրամ 4000 դրամ ԽՈՍԵԼԱԺԱՄԱՆԱԿ 90 օր ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

| ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՑԵՐԵԿԱՅԻՆ 7:00 - 23:00 դրամ/րոպե | ԳԻՇԵՐԱՅԻՆ 23:00 - 7:00 դրամ/րոպե |
|---|---|---|
| ՎիվաՍելի ցանցում | 80 | 70 |
| Մնացած բոլոր ուղղություններով* | 90 | 80 |
| SMS տեղական և միջազգային | 20 | 20 |

* քաղաքային, բջջային, ՀՀ-ում, ԼՂՀ-ում

20% ԱԱՀ ՆԵՐԱՌՅԱԼ

ԱՆՎՃԱՐ 111 ԹԵԺ ԳԻԾ

(093) 297 111
անվճար միայն ՎիվաՍելի բաժանորդների համար

www.vivacell.am

VIVAcell Ձեր ընտրանքը

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 2.03.2006, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Գինդ» տպագրատանը: